



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 6

ՀԱՄԱՐԱԲԵՐՈՒՄ

6 ՓԵՏՐՈՒԱՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՌԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԾԱՆԻ
Տարեկան 50 Ղր.՝	Տարեկան 54 Ղր.՝	Տարեկան 12 Տր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՅՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն բերել ՍԱՐԳԻՍՈՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն օրոնք հրապարակի վրայ կը եղին :

ՍԱՐԳԻՍՈՅ ժամացոյցները շեղմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ Զեւեթը՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — Զեւեթ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանգեսին մէջ ամենեւեւ բարձր պարգեւին արժանացած են :


Հասք 40 փարսա

ԱՐՏՈՂԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(ضاريان) مطبعه سی باب عالی جاده سی ۳۸

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ազի մասսկսի քիւ 38



Չեռի, ոսկի ու ոսկի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարելի մեքենայի մնայ,
լայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
և ապաւորակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ը

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը և. դիւրագործելին ըլլալուն բոլանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ ֆինկերի մեքենան կը գէշ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

Սինկերի
մեքենաները

- | | |
|---------|--|
| ՌԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պան Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրափի Լիւէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաբէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊԱԼԱՏ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Մուլթան Պէյադիա, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՄԱԻԻՏՈՐ | Զարչը Պոյս, թիւ 120 . |

կատարելայ երաշխաւորութիւն

Մասնաձաղեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բեքա, Մեծ փողոց, թիւ 343 և
343 կրկին, Տիւրքոյլաի տունը:

ՅԷՆԻՔԱ ՕՔԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՌՎ

Դրամագլուխ եւ Պանիսի գումար

31,008,000 Ժրանի



ՀՐԳԵՀԻ ՃԻՌՎ

Դրամագլուխ եւ Պանիսի գումար

17,000,000 Ժրանի

ՅԷՆԻՔԱ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարապէ:

ՅԷՆԻՔԱ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային
կանքի վրայ:

ՅԷՆԻՔԱ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չոգհնաւի՝ եւ ու
ռազատամեաւի-վրայ:

Ընկերութեան գրամատունն է ԲԵՐԵՏԻ ՎԻՅՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրամատն
եակն է Պոլիս, Հաճորուչո խան, Թիւ 52, 53, 54, 55, 56:

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառն պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր ներկայացուցիչ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/կ 6

ՇԱԲԱԹ

6 Փետրուար 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի Առաջնորդութիւնը (Խմբագրական). — ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ : Բարիգի
Կեանքին (Պարահանդեսին յաջորդ օրը). — EDOUARD ROD (Թարգմ.) ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼ-
ՊԱՆԴԵԱՆ : Երկիւղ (Բանաս.) . — Օ. ՔԱՄԵԼԻԱ : Յուշատետրիս էջերէն (Ֆանթեզի) . —
ՄԱՌԿՈՒԹ : Թապալ . — ՌՕՄԱՆ : Երեկոյթն Առաջ (Օրը օրին) . — ԼԻԼԱ : Զուարթ
Ժամեր . — X : Տղան (Ոսանաւոր) . — ԵԴ. ԳՕԼԱՆՃԵԱՆ : 10,000 Տարի Սառնակոյսի մը
մէջ (Հանրագիտակի քերթօնը) LOUIS BOUSSENARD (Թարգմ.) Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ :

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Բաւական բարիծաղիկ քահանայ մը ըլլալ կը թուի Գահիրէի Առաջ. փո-
խանորդ Տ. Մամբրէ քահանայ Վարդանեանը, որուն անլուր շահատակութիւն-
ները լսելու հարկին տակ գտնուեցանք այս շաբթու, Մանգրումէի թղթակցին
այն գայթակղեցուցիչ յայտնութիւններով, որոնց վաւերացումը չուշացուց տեղ-
ւոյն Գաւառական ժողովը և պաշտօնական յայտարարութիւնով մը հրապարա-
կեց թէ, յիշեալ քահանային իբր թէ վատառողջութեան պատճառաւ տուած
հրաժարականը ընդունած և իր կարգին՝ աշխարհականի մը յանձնած է Ա-
ռաջնորդարանի պաշտօնական գործողութիւնները կատարելու հոգը, իր տեսա-
կին մէջ եղական օրինակ մը հանդիսանալով այսպէս գաւառական Առաջնոր-
դութիւններու մէջ :

Այս յօդուածով չպիտի երկար բարակ քննենք այն պատճառները որոնց-
մով այդ շնորհունակ քահանան՝ կնոյ մը հետ յարաբերութեան մտնելու համար
անոր ամուսինը սատկապէս ծեծել տուած, և զայն մեռցնել յանդգնած է :

Առաջին անգամը չէ որ Հայ քահանայ մը այս կարգի դետնաքարչ ստոր-
նութիւններու հեղինակ կը հանդիսանայ իր կրօնական պատկառելի սքեմով, և

կը գտնուի այսպիսի ցաւալի պարագաներու մէջ, որոնք Հայ եկեղեցիին արատ կը բերեն ամէն ատեն : Սովորական յանկերգի մը կարգը անցած է ալ եկեղեցականներու այս ամսարիշտ ընթացքը և մեզի համար այլ ևս զարմանք չեն ազդեր կարծես հետզհետէ իրարու յաջորդող շահատակութիւններու այս լուրերը, որոնք տուաւ կամ նուազ համեմատութեամբ միեւնոյն դատապարտելի դրոշմը ունին իրենց մէջ, և կը տարբերին անով միայն որ, այսինչ եկեղեցականը այն ինչ գաւառին մէջ կը գործէ իր շահատակութիւնը և ուրիշ այսինչ մը՝ այլուր դուրս կուտայ իր գոյնը, միշտ հանրութեան աչքին տուելու համարձակ, միշտ հոգեւոր վերին իշխանութեան խրատներուն անտարբեր :

Ինչ որ դիտել տալ կուզենք այս առթիւ, այն ալ սա է թէ Առաջնորդութեան և կամ Առաջնորդական փոխանորդութեան պէս կարեւոր և ազդեցիկ պաշտօններ երբեմն յանձնուած են այսպէս դաւառներու մէջ, ասանկ անբարոյ և անպարկեշտ անձերու, որոնք հեղինակութիւն մը կը համարուին իրենց պաշտօնին բերմունքով և շատ չքեր, երեւան կը բերեն իրենց ինքնութիւնը, նկարագրի ամէն ազդեցութիւն և ստորնութիւն հրապարակ հանելով :

Անդրադառնալով Գահիրէի տխրահռչակ քահանային, խնդիրը բաւական ծանրակշիռ հանգամանք մը առած է, և կառավարութիւնն ալ իր կարգին դատապարտած է մեղապարտ եկեղեցականը, որ Գահիրէի պէս քաղաքակիրթ երկիրի մը մէջ, չգոհանալով Առաջնորդական փոխանորդի իր փառքէն, ուրիշ փառքեր փնտռելու ելեր է, իր անզուսպ կիրքերուն յագուրդ մը տալու համար : Ընդունինք սակայն որ, այս պարագային՝ Եգիպտոսի Առաջնորդութեան թափուր մնացած պաշտօնը բաւական դեր խաղացած է այս քահանային շահատակութեան գործին մէջ, ու քահանան իր Առաջնորդական փոխանորդի պաշտօնին ազդեցութիւնովը յաջողիլ փորձած է իր գայթակղալից արարքներուն մէջ :

Եգիպտոսի պէս թեմ մը արդէն մինչեւ ցարդ առանց Առաջնորդի թողուլ այնքան բանաւոր չէր բնականաբար, որովհետեւ եթէ նմանօրինակ խնդիրներ ալ գոյութիւն չունենային հոգ, պարզ քահանայի մը գործը չէր վերջապէս Առաջնորդական աթոռը բազմիլ, ո՛ւր մնաց այդ բարիժաղիկ քահանային պէս եկեղեցականի մը, որուն արժանիքը ինչպէս տեղացիներուն, նոյնպէս Պատրիարքարանի ծանօթ պէտք էր ըլլար անշուշտ, իր ընտրութենէն ալ առաջ :

Ու մինչ նեղոսի ափերը արձագանգը կը բերեն մեզի այդ Հայ եկեղեցականին դայթակղութիւններուն, Եգիպտոսի Առաջնորդական աթոռը դեռ պարապ կը մնայ, ու հազիւ այս շաբթու ընտրելեաց հռանուն ցանկ մը կը զրկուի հոն : Ղրկուած այդ եռանուն ցանկը սակայն, որուն անունները կը կաղմեն,

Տ. Հմայեակ Ա. Եպիսկ. Դիմաքսեան

Տ. Մկրտիչ Ծ. Վրդ. Աղաւնունի

Տ. Վահան Ծ. Վրդ. Յակոբեան

Դժբաղդաբար մեռեալ տառ պիտի մնայ, մեր կարծիքով, անոր համար որ, Բերայի պատուական քարոզիչ Սրբազանը արդէն տուած է իր հրաժարականը ըն-

տրելիութենէ, ու միւս երկուքն ալ իրենց վարդապետական սքեմին համար, ընտրելիները չեն կրնար ըլլալ Եգիպտոսի հայերուն, այս վերջիններուն համար միակ ընտրելին ըլլալով Երուսաղէմի Պօլսոյ Պատր. փոխանորդ Տ. Գէորգ Եպո. Երէցեանը:

Եւ իրօք ոչ ոք մեր եկեղեցականներէն՝ այնքան պիտի վայլէր Եգիպտոսի Առաջնորդութեան, որքան շատերու համակրանքին արժանացած այս համակրելի Սրբազանը, որ իր ուսմանքովը, լեզուովը, պատկառանքովը և հայ եկեղեցականի վայել կենցաղովը ամէնէն յարմար և ամէնէն օգտակար Առաջնորդը պիտի ըլլար Եգիպտոսի:

Խնդիր է գիտնալ սակայն թէ Երուսաղէմի վանույ հաշուական ծանօթ խնդիրներու քննիօսին մէջ, Երէցեան Սրբազան ո՞րքան փափաք պիտի ունենար Առաջնորդական պաշտօն մը ընդգրկելու և երեսի վրայ ձգելու այդ դարաւոր վանքը, որ իրեն համար, ընտանի բոյն մը, պաշտելի ուխտավայր մը եղած է:

Պէտք էր որ ըսէինք ասիկա, որովհետեւ, ո՞րքան իմացանք, Եգիպտոսի հայերը արդէն Պատրիարքարանի եռանուն ընտրելեաց ցանկը չը պահանջած, նախ և առաջ Ն. Սրբազնութեան հաւանութիւնը խնդրած էին պաշտօնագրով մը, և Երէցեան Սրբազան չէր կրցած վերջնական պատասխան մը ղրկել, միմիայն անոր համար որ, անկարող կ'զգար զինքը վանքէն բաժնուելու:

Ամէն պարագայի մէջ, Եգիպտոսի առաջնորդութիւնը փափաքելի չէ որ անբարոյ քահանաներու լուծը կրէ դեռ երկար առեւն, և Մամբրէներու շահատակութեանց թաւորը հանդիսանայ, ծաղր ու ծանակ ըլլալով օտարագրելներու առջեւ:

ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ

“ՀԱՆՐԱԳԻՏԱԿ,,Ի ԱՆԴՐԱՆԻԿ ԹԵՐԹՕՆԸ 10,000 ՏԱՐԻ ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ

Ճշմարտապէս անակնկալ մը պիտի ըլլայ Հանրագիտակի անդրանիկ թերթօնը, զոր կը սկսինք այսօրուրէն:

10,000 Տարի Սառնակոյցի մը մեջ, ահա հմայիչ վերնագիրը ոչ նուազ հմայիչ ու ծայր աստիճան հետաքրքրական թերթօնին, որուն մէջ կը պատմուին դէպի բեւեռ արշաւախումբի մը կորսուած մէկ անդամին տագնապալից հոգեվարքը, հրաշալի ազատումը, իր արկածները՝ զանազան ցեղերու նորօրինակ աշխարհներու մէջ:

Ճշմարտապէս ժողովրդական ուղեւորութիւն մըն է այս, որուն հեղինակը՝ Լուի Պուսընաու, Ֆրանսայի ամէնէն սիրուած և կարդացուած հեղինակներէն մին, եղական դադանիքը ունի կարճ, կարուկ տողերու մէջ օղակաւորել հետաքրքրաշարժ դէպքերը և տագնապալից իրողութիւնները, միեւնոյն ժամանակ նոր բան մը ըսելով, նոր բան մը սովորեցնելով իր ընթերցողին: Հետեւապէս աւելորդ կը համարինք յանձնարարել անոր ընթերցումը, քանի որ մեր նոր թերթօնը թէ՛ ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ, թէ՛ ԱՐԿԱԾԱԼԻՑ և թէ՛ ԿՐԹԻՁ պիտի ըլլայ միանգամայն:

Այս գեղեցիկ թերթօնը, զոր այսօրուրէն սկսեալ կ'անոնաւորաբար պիտի հրատարակենք, թարգմանած է մեր համակրելի աշխատակից Յակոբ Տեր-Յակոբեան:

ԲԱՐԻՁԻ ԿԵԱՆՔԷՆ

ՊԱՐԱՀԱՆԴԵՍԻՆ ՅԱԶՈՐԴ ՕՐԸ

Պարասրահներու մէջ, ուրկէ նախորդ օրը կարասիները վերցուած էին, պատերուն կարգը չարուած ակոռները անկարգ վիճակի մը մէջ ձգուած են: Արուեստական ծաղիկներու տերեւները, վերջին դատրիլի հրմշտուկին մէջ կոխկրտուած ժապաւենի կտորները կը սլքտան փայլուն տախտակամածին վրայ: Ծաղիկներուն, օրօքոնաքսի և բոմամտներու խառն անուշահոտութիւնները կամաց կամաց կը չոգիանան ծանրացած մթնոլորտին մէջ. ամեն կողմ կը բուրբ ան յոգնած մելամաղձոտութիւնը զոր իրենց ետեւէն կը թողուն առաջուրնէ որոշուած հաճոյքները: Գիշերն ի բուն քնատ մնացած սպասաւորները յօրանջելով, հայհոյելով կարգի կը դնեն ամեն բան, ներկայներու կծծիութենէն սրտմտած, որոնք յուսացուած առատութեամբ պարգև չեն շնորհած անոնց:

Ամեն ոք իր յուսախաբութիւնները կը համրէ մտովի:

Սանտուիչները, օշարակները, բըթիֆուները, սենեակներուն յարդարանքը, գօթիյօնի տէքօռները, վերջապէս ամբողջութիւնը ակնկալուածէն շատ աւելի սուղի նստած են տանտէրներու: Հրաւիրեալները, սպասարկուներուն ձեռնտուութեամբ պարպեր են շամբանեայի շիշերը և լիքէօրներու սրուակները մինչև ամենէն վերջին կաթիլը, դաշնակահարն ալ կէս գիշերէն վերջը, ծայրայեղ պահանջումներ ընելու սկսած էր և հարկ տեսնուած էր համակերպիլ անոր պայմաններուն, որովհետեւ, հակառակ պարագային պէտք պիտի ըլլար դիմել տարիքնին առած կիներուն որոնք իրենց չորցած, ծեր մատներով համաչափօքն չեն կրնար զարնել արդէն պարի կտոր մը:

Դրամական տեսակէտով ալ, պարահանդէս մը աւերող, կործանարար ազդեցութիւն մ'ունի, ամիս մը շարունակ հարկ պիտի ըլլայ զեղչել մաս մը սեզանի ծախքերէն, պարոնին զրպանի ստակէն, տիկնոջ արդու-

զարդէն: Եւ այս ամենը բոլորովին պարադոքսալ: Այս հանդէսին նպատակը սա գաղտնի մտածումը չէր միթէ, տան օրիօրէին շնորհիւքով երիտասարդ մը ներկայացնել որ անոր յարմար ամուսին մը կարենայ ըլլալ: Եւ, երեկոյթին ամբողջ տեւողութեան միջոցին, օրիօրէր, ժպտալից աչքերով մտիկ ըրած է կնամեծար խօսքերուն արուեստագէտի մը — նկարիչ մը, անպիտանին մէկը զոր հրաւիրելու ձախաւեր գաղափարը ունեցած են — որուն հետ պարած է գրեթէ բոլոր վաւսերը, երբ մի և նոյն ատեն այս շնորհքով երիտասարդը, պուլթօնիյէնին վրայ կարդէնիա մը դրած, բախտազուրկ էնթրիկանթի մը պըշրանքներն ալ սիրով կ'ընդունի:

Մէկ մ'ալ, ցերեկուան դէմ օրիօրէր կ'արթննայ, երազելէ վերջը իր վաւսի ընկերին վրայ որ քիչ մը շատ կը սխմէր զինքը:

Բոլորովին գուշատ է, աչքերը սե ծիրով մը չըջանակուած են և գլուխը շատ ծանր է: Դաշնակին ձայները տակաւին կը բզզան ականջներուն մէջ. անիմաստ, ապուշ եղանակ մը կուգայ շարունակ միտքը և անհանգիստ կ'ընէ զայն: Կը յիշէ պարոններուն իր հասցէին մըմջած անհամ գօմբլիմանները և իր տուած սովորական, անարժէք պատասխանները: Կը յիշէ յոգնութենէ թուլցած, խառնակ տպաւորութիւնները և երեկոյթին աղմուկները. և այս վերջուշումներու ազդեցութեան տակ կը տխրի: Մայրը յանդիմանութիւններ կը տեղայ անոր գլխուն իր անխորհուրդ վարմունքը խմբուելով, օրիօրէր սեղան կը նստի առանց արտաքին ունենալու, մինչդեռ իր ոստոստուն երեւակայութիւնը կ'երթայ փնտռելու այն «անպիտան»ը որ սակայն իր ամբողջ հոգեկան թափովը կը վաւսէր:

Նոյն միջոցին, «անպիտան պարոն»ն ալ իր կողմէն, իր անկարգ և ցուրտ սենեակին մէջ աչքերը կը բանայ և իր տպաւորութիւնները քննելու կ'սկսի:

Օրիօրէր հրապուրիչ երեւցած է իրեն, անոր անսեթեւեթ խօսակցութիւնը, վաւսերու խօլ թռիչին մէջ զայն գողգողուն, առնել տանիլը, ճշմարիտ հաճոյք մը պատճառած են պարոնին: Աչքին առջև է անոր խրոխտ գլուխը որ խարտեալ խոսողպիկ-

ներով աղուոր մը չըջանակուած էր . անոր քաղցրահնչիւն ձայնը կը լսէ դեռ եւ կը բաղդատէ զայն ուրիշ աղջիկներու հետ, որոնք կտրած կողերով աչքեր եւ հատնող ձայն մը ունին : Իր միօրինակ ամուրի կեանքին ձանձրոյթները կը ճնշեն հոգիին վրայ . կը յիշէ իր անզոյգ դուրսանքը , ծակծկած թաշկինակները , իր ողորմելի չապիկներուն փեթուած պոթօնիւնները , վերջապէս իր հանդերձեղէններէն շատ աւելի չարճարուած սրտին պարապութիւնը :

Ինքնիրմէն կ'ելլէ այն ատեն , ամուսնութեան երազը շոյել կը սկսի . կին մը , տունին մէջ կարգ ու սարք , հարուստ ու նենայուն պէս lait de poule (*) ! :

* *

Աղքատ սղութիւն , որ շնորհքով երիտասարդը ափին մէջ առած էր , ան ալ չէ քրնացած :

Ամբողջ գիշերը , տենդոտ , պարասրահներու հանգստաւետութիւնը բաղդատութեան դրած է իր բնակարանին թշուառութիւններուն հետ : Երեկոյթէն երկու օր առաջ իր ասեղին շնորհիւ մէջ , տեղ հանած հրաշալիքները միտքը կ'ուզան , կը յիշէ այն չոր ու ցամաք ճաշերը , ուր կերակուրի բաժինները չափուած են , իր դրամական անհաշիւ վիճակը , որու պատճառաւ հազիւ կրնայ ծարր ծարին բերել : Երազած է շքեղութիւններ , հոյակապ տուններ , կառքեր , աղնուացիկ ձիեր , աղամանդներ — վերջապէս այն ամեն բաները զոր գիշերուան դաժալիէն պիտի կրնար իրեն պարգեւել , եթէ Բայց աղքատ աղջիկ մը շատ դժուարաւ կ'ամուսնանայ , մանաւանդ երբ իրեն պէս պարկեշտ է ! . . . հետեւաբար , ամբողջ օրը իր զբաղումներովը կը տարապի , անանկ համակերպող քաղցրութեամբ մը զոր չ'ունէր մինչեւ այդ օրը , եւ որ իր բնաւորութեան բնաւ չհամապատասխաներ :

* *

(*) Հաւկթի դեղնուցի , կաթի , չաքարի խառնուրդէն կազմուած ժմպելիք :

Հրաւիրեալներու մեծ մասը չառախօսութեան , այսինքն բամբասանքի կ'սկսի :

Ամենքն ալ նշմարած են « անպիտան » ին հանգէպ օրիորդին ցոյց տուած հաճոյակատարութիւնը եւ ամենքն ալ կը խղճան տանտիրոջ եւ տանտիրուհւոյն յուսախաբութիւններուն վրայ . պէ՛տք է որ այսպիսի որոշ ինքնութիւն մը չ'ունեցող մարդիկ սպորդին , տուններուն մէջ ! Տէր Աստուած ! մեղք ընտանիքի մեծերուն , որոնք չ'են կրնար պաշտպանել ինքզինքնին այս սեսակ դատարկապորտներու դէմ , որոնք բարեկեցիկ տուններու սեմէն ներս մտնալնուն պէս ձախորդութիւն մը կը բերեն հետեւին ! որովհետեւ դժբաղդութիւնը անխուսափելի է . օրիորդը չփացած աղջիկ մըն է որ մինակ իր խելքին կը հաւնի եւ երբոր երիտասարդ աղջիկները միայն իրենց խելքին կը հաւնին ! . . . Տխուր շարժուածք մը կը յայտնէ այդ վախցուած հետեւութիւնը :

Շնորհքով երիտասարդին բաղդն ալ մըտահոգութիւն պատճառելէ ետ չ'մնար : Խել մը մայրեր , որոնք սիրուն աղջիկներ ունին — ծաղիկներ նկարող , դրամօժիտ ունեցող ճշմարիտ աղջիկներ — աղուոր յոյսեր յղացած էին , բայց դժբաղդաբար ! հիմա այդ յոյսերն ալ ցնդելու վրայ են . . . : Սա երիտասարդ պատանիներն ալ որչափ գէշ կըմբռնեն իրենց շահերը : Ով գիտէ որչափ պիտի ցաւին ապագային ! . . . Ախ ! եթէ գիտնային , ինչպէս պիտի լուեցնէին իրենց սրտին ձայնը , դատողութեան հետեւելու համար ! Սակայն չեն գիտեր եւ հետեւաբար պիտի ունենան թեթեւօլիկ կիներ , իրենց քսակին բաղդատմամբ չափազանց շատ զաւակներ , գէշ կառավարուած տուն մը , ծիծաղելի զոքանչ մը իր անհանդուրժելի ազգականներով միատեղ :

* *

Պարահանդէսը մանաւանդ մեկնութիւններու տեղի կուտայ :

Շատ մը լրագիրներ կ'ծու խորհրդածութիւններ կ'ընեն ասոր մասին . . . : Ժողովուրդին համար ինչ չա՛հ կ'արտադրէր . . . մանաւանդ երբ անսովոր բան մը տեղի չէ ունեցած հոն . Ռէտէրէրի շամբանիայէն մեծ քանակութեամբ չի կար , անտարակոյս ջուր

խառնուած էր Պօրտոյի գինիին, սան-
տուիչներու մէջ ժամպօնի պղտիկ կտորները
կարագի բարակ խաւի մը տակ ծածկուած
էին... մէկ խօսքով, խղճալի բաներ!...

Յետոյ, այսինչին ներկայ չըլլալը կը մատ-
նանշուի. երկու հրաւիրեալներու միջեւ փո-
խանակուած ծանր խօսքերը բերնէ բերան
կը կրկնուին. կառք չունեցողներուն հարբս-
տութեան մակարդակը հաշիւի կ'ենթարկը-
ւի. վերջապէս չարամիտ ենթադրութիւն-
ներու շարքը կը հասնի... Որովհետեւ
անոնք որ պարահանդէսին հետեւեալ օրը,
նսեմ մեղամաղձատութեան մը մէջ չեն թաղ-
ւիր, գոնէ, գէշ տրամադրութեան մը տակ
կըլլան և հետեւաբար աս ան կը բամբասեն:
Աշխարհիկ հաճոյքներու վերջին խօսքը
աս է:

EDOUARD ROD

(Թարգմանեց)

ՄԻԲՍՏԷԼ ՆԱԼՊՈՆԳԵՍՆ

Գատրգիւղ

Ե Բ Կ Ս Ե Բ Դ

Ձիղերս համակ կը գրգռուին, կը վառին,
Քեզ սիրելու, քեզ պատշելու տենչանքն,
Յոյգերս ամբողջ մրմունջներով դառնագին,
Զգացումիս բոբրումները կ'երգեն:

Յնդած միտքիս հորիզոնը ամպոսած,
Անդրիացումն է հասակիդ սիգանեմ,
Ու մոգական դիմաստուերիդ լուսամած,
Զոր ետ հեռուէն գաղտագողի կը պատեն:

Եւ անձկութեամբ ես կը խորհիմ ցակաւին
Փայփայել քեզ քեւերուս մէջ մեղմօրօր,
Լուռ հեռանքի մէջ՝ հրապի քեզ հոգեւին,
Ու մոլեգնիլ, կուրծքիդ վրայ սիրածոր...:

Այլ ակնարկեդ խոժոռ, դժխեմ, բոցեղէն՝
Կը թանքուիմ, կը դողդրդամ անձկագին,
Անոց հուրէ լեզուները գիս կայրեն,
Եւ... կը վախճամ, երեւալու քու այրին:

Օ. ԲԱՄԵԼԻՍ.

ՅՈՒԺԱՏԵՏՐԻՍ ԷԶԵՐԷՆ

[ՅԱՆԹԷԶԻ]

Ներկուշաբթի

Փետրուարամուտին սա ներկայ օրերուն,
օրե'ր որոնց մէջ տանտ, երեկոյթ, տօնախմբ-
ութիւն, թատրոն ու կերուխում իրենց յա-
տուկ շրջանը պէտք էին բոլորել և մենք
ատոնց նկատմամբ պարտ էինք մեր ընթեր-
ցողներուն տալ պէտք եղած աւուր պատ-
շաճի գուարթ տեղեկութիւնները, սակայն
և այնպէս անողոք և անտանելի հեճուեցե-
ցան առաջ նետուելով՝ կը օտիպէ մեզ իր-
մով զբաղիլ պահ մը:

Սա չըլլալիք բժիշկներուն, ըսեմ, թէ ոչ
կանացի գլխարկներուն ձեւին ու գոյնին
հետ յարափոփոխ հիւանդութիւններու տե-
սակին, որոնց պէտք է վերագրել. սակայն
ճշմարտութիւնը սա է որ, այսօր՝ չքեղ ե-
րեկոյթներու յատուկ սալօնները, որոնք փալ-
փըլաշուք տիկնանց և օրիորդներու կողմէ
գրաւուած պիտի ըլլային՝ սրէնտոր գլխարկ-
ներով բժիշկներու գօնասիւղասիօնի ժամա-
դրասրահը դարձած են: Այն քառակուսի
քովիտի սենեակները, որոնք նոյնպէս սու-
առէ տանտաններու յատուկ կերուխումի
պիւժներու կը յատկացուէին, այսօր մէկ
մէկ մահճակալ դրուած կը կենան, որոնց
մէջ կը տեսնուին ոսկրամաշկ հիւանդներ,
հեճուեցեցայէ վարակուած: Այն ճարպիկ
խոհարարները որոնք ներկայ ամսոյս սա
օրերուն ճաշմանքներ, անուշ բաներ, մայո-
նէզներ և վերջապէս նմանօրինակ պահեստի
ուտեստներ պատրաստելով կ'զբաղէին քըր-
տինքներ թափելով... ուտելիքներուն մէջ,
այսօր առհասարակ մսի ջուր կը հայթայ-
թեն տիկիներն մինչեւ սպասուհիին՝ ինչպէս
նաև տան աղայէն մինչեւ թօգերը առնող
սպասաւորին:

Իմ կողմէս ջերմ և խորախորին ցաւա-
կցութիւններ իրենց հասցէին, Փետրուարը՝
իր անուշ զբօսանքներով վերմակին տակ
անցընելուն համար:

Bonne convalescence !!!

պրկեան moderne և իր տեսակին մէջ . . . մէկ հատիկ տարեցոյցին համակ գրական (?) հատորիկը նոյն իսկ քննադատ Քիրիշճեանի խելապատակին գործն է :

Ժողովուրդը այս աստիճան միամիտի տեղ դնելով անոր քիթին խնդալը՝ սովորական ծիգ-դիմակի գործ չէ : Քիրիշճեան իր աշխատասիրութիւնը կը գովէ, կը պրպտէ, ու գեղեցիկ գործ մը ըլլալը կը հաստատէ իր աշխատակցած պարբերականին մէջ :

Ինքնագովութիւնը եթէ ո՛չ մեղք՝ գէթ զգուշի մոլութիւն մը ըլլալը՝ չենք կարծեր որ չգիտնայ տարեցոյցին cuisineը պատրաստողը, սակայն ի՞նչ հաճոյք, փառք կամ պատիւ տեսած ըլլալ կը թուի նոյն այդ գրուածքով :

Կ'երեւի թէ իր անխնամ գործը ժողովուրդէն կամ լաւ է ըսել գրչի մարդոցմէն կամ հրապարակագիրներէն տղայական հաւաքածոյի մը տեղ դրուելով, անոր մասին տող մը իսկ չմոտտուիլը նախանձը գրգռած է մեր ինքնակոչ պուէտին, այնպէս որ ինքնագովութեան պէտքը զգալով այս առթիւ, չէ՛ քաշուած նոյն իսկ իր գործը իր անունով գովելու :

Կօշկական ցկօշիկն :

Ուրբաթ

Մօտերս աղջիկ զաւկի տէր ու տիրական մայրեր, իրենց քանտիլաքը ծախելու համար հարկ անհրաժեշտ մամոնային, օփտին բնական ու արուեստական գեղեցկութեան վրայ աւելցուցին առողջական և ֆիզիքական ժիմնասթիքը :

Ամուսնացու երիտասարդներ, կնութեան համար ձեռքերնին երկնցուցած օրիորդներնուն վրայ փնտռած մանրազննին առաւելութիւններէն զատ, կ'երեւի թէ նանպազութիւն ալ սկսած են փնտռել, այսինքն թեւերու և սրունքներու ոյժ, չեմ գիտեր ի՞նչ *arriere pensée* ու :

Խեղճ մայրեր, ա՛յս ալ ձեր մեղքէն : Այս օր դիւրին է տեսնել օրուան օրիորդները իրենց յատուկ թուալէթի սենեակին մէջ երկաթ ալթէնները ձեռքերնին, որոնք մարմնամարդի փորձեր կը կատարեն գոհա-

ցնելու համար աս կերպով իրենց դէմ ճակատելիք միւսիւ Յակոբիկները :

Ըստ իմ ամուսնացու երիտասարդներու այս բացառիկէն բացառիկ հովիտը պահանջը ինպատ իրենց է միշտ : Ալթէններու փորձերը թեւերու ոյժ կուտան իրօք . . . ապագային քեքնէյին տակ կենալով՝ ժամերով լուացքին օգնելու համար :

Ամէն խնդիր, ամէն հարց, իր երօճօմի բռաքիք յատկութիւնը ունի :

Շաբաթ

Այս պահուն՝ երբ նիւթ կ'որոճայի, յանկարծ իմացուցին նպարավաճառիս տետրակի ի ձեռքին կալեւոր այցելութիւնը :

Կ'զգաք վիճակս :

Յաւաստութիւն, մինչեւ որ ճամբեմ :

Կիրակի

— Լա՛ւ է չորս այր մարդու հետ աշխարհիս շրջանը ընել, քան մէկ կնոջ հետ կամուրջը անցնիլ :

— Այր մարդուն աչքը հողիին վրայ կըլայ միշտ, իսկ կնոջը՝ քսակին :

— Զաւակը՝ ծնողական սէրը ի մի կապող չղթան է :

— Ամէն խինդ իրեն յաջորդող արցունքը ունի, ինչպէս ջինջ երկինքը իր մութ ամպերը :

— Ծանչցի՛ր միշտ արժանիքը անոր, որ քու թերութիւններդ քեզ կը ձակատէ :

ՄԱՌԿՈՒԹ

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԸ ՄԷՋ

Ուսուցիչը. — Պարո՛ն, կրնա՞ս ինծի ըսել թէ՛ բերանը ձիթենիի ճիւղ մը առած Նոյի տապանը դարձող աղանիւն արո՞ւ էր թէ էգ :

Աշակերտը. — Անպատճառ արու ըլլալու էր, վարժապետ, որովհետեւ եթէ էգ ըլլար, այնչափ երկար տանք բերանը զոց չէր կըրնար պահել :

Զ. Մ.

ԹԱՊԼՕ

I

Ծանօթներէդ մէկուն գրիլ տուած նամակներդ իրենց կարգին մեծ մեծ դերեր խաղացեր էին : Թանկագին ծաղկափունջերուդ թիւը ալ չափը անցուցած էին , ու մսխած դրամդ անհաշիւ էր : Բայց տարիներով երազած ու միշտ տխուր պատրանքներ օրէ օր կը յուսահատեցնէին քեզ : Օր մը , անակնկալ առիթ մը դէմ առ դէմ կը բերէ երկուքդ , երբ անիկա մէկ քանի աւրիներ գուգեկներուն հետ քաֆէի մը մէջ կը գտնուէր : Յուզումէդ թունդ ելած , մեծ հապճեպով աթոռ մը կը ճարես ու իրենցմէ քիչ մը անդին գտնուող սեղանին առջև կը նստիս : Ուրախութիւնդ չափ չունէր : Ակնարկներդ հազիւ թէ իրենցնէր խաչաձեւեր էին և հազիւ թէ անյուսն հեշտութիւնով մը իր մեկանուշ ժպիտներուն պատասխանելու փորձը պիտի ընէիր , յանկարծ իր շուրջիններէն մէկ քանին հեղնող քահնանիներ մը ձգելով երեսդ ի վեր , կ'իմացնէին թէ , ձեռքդ գտնուող թերթը սխալ բռնած էիր հակառակ կէս ժամէ ի վեր խոհուն ուշադրութեամբ մը բնական բան կարդացած ըլլալուդ . . . : Կատարիդ բան մը չէր :

II

Շատոնցունէ ի վեր խօսատացեր էիր ընկերուհիներէդ մէկուն այցելութիւն մը տալ : Գիւղէդ դուրս գտնուելուն ստիպուած էիր աղուոր օդի մը սպասելու , ճամբայ ելնելու համար : Խօսակցութեան միջոցին ,

—Ախ , հիանալի ճամբորդութիւն մը ըրինք և չափազանց գեղեցիկ անակնկալ մը ըրաւ հայրս , կըսես , ճոխ լանտօ մը դնելով տրամադրութեան տակ . . . : Եւ հազիւ թէ խօսքդ կտրէր էիր , հայրդ էր որ կ'առնէր անդին :

—Սա կառավարները աճայիպ մարդիկներ են . այսօր բաւական անցք մը ունեցանք աղջկանս հետ , անպիտանին մէկը երեք քառորդ ուղեց մէկ քառորդէն բերելու պայմանով , մինչ ես . . . : մէկ քառորդ տուի և երեք քառորդի ճամբայ մը հոգ

չէր որ կտրեցինք , բաց քնկլով մը . . . կ'աւելցնէ երեսդ ի վեր նայելով , մինչ դուն պրտոկներովդ զրաղած էիր . . . :

III

Այլեւս կարգուելու տարիքիդ հասած , մօրդ ստիպումները մեծ հոգ մը դրած էին մէջդ , ամուսնանալու որոշումիդ վրայ մը տածել տալով :

Օրին մէկը արհեստով լուսանկարչական retoucheur ըլլալուդ , անտանելիօրէն ագեղ աղջկան մը քիչէն ունէիր ձեռքդ , որուն մասին բաբրոնդ կ'իմացնէր թէ չափազանց խնամով ըրթուշ պիտի ընէիր և կարելի եղածին չափ ֆլաթէ : Չափազանց բարկայիւր էիր այդ ծանր աշխատութիւնը ձեռք առնելով և սոսկալի տրտունջով հազիւ գլուխ հանէր էլր զայն գրեթէ մէկ երկու օրուան մէջ : Այլեւս ձանձրացած մօրդ անլերջ ստիպումներէն , օրին մէկը վերջապէս , կը հաճիս տեսնել առաջարկուած աղջկանը պատկերը , զոր մեծ խնամով պահեր էր մայրդ , տրամադրելի մէկ վայրկեանիդ քեզի ցուցնելու և կարծիքդ առնելու կանխամտածումով : Ու այն վայրկեանին , երբ ենթակային մասին շոյալուած գովեստներէն , անոր գեղեցկութենէն , ձիրքերէն հետաքրքրուած , մեծ հաճոյքով կը բաղձայիր տեսնել պահուած լուսանկարը , օրերով անիծած քիչէիդ վրայի պատկերին չնայտարհիկ դէմքը կը տրուէր ձեռքդ :

ՌՕՄԱՆ

ՎԵՐԱԲԱՅՈՒՄ

Ուրախութեամբ կը ծանուցանեմք թէ Մանգուլէի Էֆեաւ Ժողովրդական հայաթերք , որ Տպագրական Տեսչութեան հրամանաւ դադարման ենթակուած էր նախընթաց շաբաթընէ ի վեր , այս երեքշաբթիէն հրաւարակուիլ ըսկրտաւ ըստ առաջնոյն , խիստ հետաքրքրաշարժ եւ գեղեցիկ թերթներով :

Մեր խնդակցութիւնները կը յայտնենք այս առթիւ մեր համակրելի պաշտօնակցին :

ԵՐԵԿՈՅԹԷՆ ԱՌԱՋ

(ՕՐԸ ՕՐԻՆ)

Մէկ զրուշնոց պզտիկ օրացոյցները գիտէ՞ք, կամ ունի՞ք ձեր գրպաններուն մէջ. այդ միջինիկ տետրակներուն մէջ տարւոյն տասներկու ամիսներուն սկիզբը ուշադրութիւն ըրած էք երբէք, մէն մի ամիս իրեն յատուկ նշանաբանը ունի, ինչպէս Մարտին՝ զառնուկը, Սեպտեմբերին՝ ձուկը, Օգոստոսին՝ ցորենի մանգաղը, Մայիսին՝ ծաղիկները, ինչպէս նաեւ միւս ամիսներուն իրենց յարմար պատկերները: Արդ ես պիտի ուզէի կամ առաջարկէի որ ներկայ Փետրվարին զոյգ մը երկսեռ երիտասարդներու անկաժէ պատկերը դրուէր իբր նշանաբան, պարին և սուառէներուն, որոնք նոյն իսկ այս փոքրիկ ամիսին մէջ տեղի կունենան աւելի, ու Բարեկենդանի հանդիպումն ալ նոյն այս ամսոյ մէջ զորաւորագոյն ապացոյցը այս առթիւ:

Բոլոր անուններու երեկոյթները, պարահանդէսները, սուառէները, վերջապէս «ցատկեմ»ի, «ուտեմ»ի ընտանեկան զուարճութիւնները, նոյն իսկ ներկայ Փետրվարին կը կատարուին, այնպէս որ երիտասարդ, արու, էգ զաւակներ ներկայ Փետրվարին է որ իրենց հայրիկին փետուրը վար կընեն... համոզելու, լողողելու համար զայն հինգ տասը ոսկի աչքէ հանելու համար... վասն ոչինչի:

Դիտուած է որ Փետրվարը հակառակ իր պզտիկ տարիքին, որ 27—28 օր կ'ապրի միայն, տարւոյն է'ն անառակ զաւակն է, է'ն զեղխը, է'ն բազմածախսը և է'ն վրտանդաւորը:

Փետրվարին է որ բժիշկները իրենց պիւտճէն կը շտկեն, մօտիսթները պարտքերն կը մաքրեն, դեղագործներ՝ տոսօկիսթին հաշիւը կը օրեն, դերձակներու ձեռքէն ասեղը չիյնար, կօշկակարներ կաղի լոյսով կ'աշխատին ու ֆանթէզիի վաճառատուները ժամը գիշերուան մէկին կը գոցուին՝ յաճախորդի և առեւտուրի անվերջ վաստակէն:

Երեկոյթէն կ'օգտուին հրաւերեալները, ու սարքողին կը մնայ մտածել, տուժել ու վատնել, և աւելին՝ լսել այն բոլոր լեզուները՝ որոնք կ'երկարին իր վրայ, բամբասանքի, քաջքոյութի, քննադատի լեզուները, անոնք որ եկան, կերան, խմեցին, ցատկեցին, զուարճացան, նոյն իսկ ասոնք են, որոնք առնէն դուրս ելածնուն պէս կըսկսին իրենց քոթիքը՝ իրենց վայելած և զուարճացած տանը մասին:

Պարզ օրինակ մը կը բաւէ կարծեմ ըստուգելու մեր ըսածները, քանի որ դուք, Աղնիւ ընթերցողք, պիտի կրնաք նոյն այդ օրինակին մէջ լսելու այն բոլոր զրուցատրութիւնները, տեսնելու բոլոր պատկերները, որոնք պիտի կրկնուին քիչ մը վարը, միշտ մեր ընտանեկան կեանքէն, մեր սոհմային բարքերէն ընդօրինակուած:

* * *

Մենք երեկոյթը կը հասկնանք՝ քօնեակին, օղիին, շաքարին, յաջորդեալան մեծարանքին և պարերու անվերջ, անտիաիկ դարձուածքներուն մէջ: Մինչդեռ Եւրոպացիք՝ որոնցմէ կապկած ենք այս սովորոյթը, տարբեր կ'ըմբռնեն սուսուսէն:

Կը պատահի որ ընտանիքի և աղջիկ զաւակներու տէր ու տիրական հայր մը, ներկայ Փետրուար ամիսին, իր անունը տօնախմբելու համար, սանկ, հովի պէս, մտքէն երեկոյթ մը սարքելը անցընէ: Խեղճ մարդուն մտքէն անցունելը բաւական է ոտք հանելու իրենները, որոնք մեղուի պէս վրան թառելով՝ կը սկսին ծծել ու քաշել ի խնդիր թուալէթին, կինը մէկ՝ իսկ աղջիկները չորս կողմէն:

—Դիտես ես, հայրիկ, անունդ է եղեր գալ չարթու...:

—Աման հայրիկ սուառէ տանք...:

—Կլորիկ հայրիկս, լուսցունենք...:

Ահա նախաբանը ըլլալիքին ու կատարելիքին, որուն դէմ չկրնար դնել փետտած

թավուխ հայրիկը, քանի որ անդին Տիկինըն ալ մէջ իննալով, ան ալ իր կարգին՝ իբր թէ աղջիկներուն խաթերը համար խօսք կ'առնէ,

— Էյ հախ ունին չօճուխները, գիտն'ս եա... Թախտալէրտէին փլած տարիէն պէրի է տուններին չորս կաղ վառած տէ ճիւղալօ մը չալած չունինք...

— Քա աղէկ ամա, ինչ պէտքութիւն ունիմ քի օխտը մահալլէին հապանճին չօլուխ չօճուխ, թոռ թունորդի, տունս լեցունեմ տէ, կերցունեմ, խմցունեմ, լուսցունեմ...

— Տէր ողորմեայ, տուններին մուկի խափան չէ եա, չօգ չէյ... օխտը չէ քի, տասնը օխտը մահալլէյէն հրամմէ գայ նէ, կէնէ թալան առասին տասուերկու չօճուխ կրնամ պառկեցունեմ քուններին գայ նէ...

— Աղէկ եա, քեզի ո՞վ ըսաւ քի Մաթիկին տունը օթել է տէյի... Ինչ տեղը կայ քի էլ ալէմին չօճուխը աս ցուրտերուն սէպէպ ըլլամ տալէթ ընեմ տէ, հիւանդանոցի պէս սըրաւարտի պոյ պոյ պառկեցունեմ...

— Ձեա հասկնար կոր միտք բանիս, սանքի կըսեմ եախօտ ըսել կ'ուզեմ կոր քի, տալէթիները իրենց չօճուխներն ալ հետ բերելու օր ըլլան նէ, կէնէ կը սըղմինք...

— Էյ... սողրա՞...

— Սօղրա, իշտէ ճահլիները ուտեն, խըմեն, ցատքեն, խաղան եղաւ գնաց, առտուն ալ լուսը ճեղքուելուն պէս, ամէն մարդ տեղը, փիլաւին եղը...

— Մինչեւ առտու մի՞... էյ աս ինչո՞ւ քա բուրձը...

— Էյ հիմաճուկուան մօտան ուռուժիղը անանկ է, իրեքին կուգան, իրեքին կ'երթան:

— Քա աս տասուերկու սահաթուն մէջը աստար սիւրին կշտացնելու է, խելքերն ո՞ւր եկաւ...

— Պէ՛ ճանըմ, քեզի ո՞վ կ'ըսէ կոր քի եկած մարդը սուֆուան պիտի նստի տէ հապըռէ տիրո՞ր որ լուս պօղաղին պիտի պանեցունեն տէյի, ասանկ առատա սըռատա, հովի պէս իքուամ մը պիտի պտըտքի, խուսուր վախիթը տանս...

— Թամամ... դիտն'ս օխան քանի՛ է, իլէ հիմա...

— Նասըլ օխա, ինքզինքիդ եկուր մա՛րդ:

— Ես ինքզինքիս եմ, դուն քեզ նայէ, խուսուր վախիթը տանձ կ'ըսես կոր նէ, գիտն'ս քանի օխա կ'երթայ... վեց վեցէն հիսապ ըրէ...

— Աստուծոյ աչկին մեռնիմ հէմէն, տանձ, արմուտ չեմ ըսեր կոր, տանս, օյին, խաղալուն համար եմ...

— Հա՛, ինչ գիտնամ, նորհարութանդ պիլէ ասանկ ալաֆուանկա լուղէթներ չիյտէյիր տէ քոքնտան սօղրա ելար լիզուդ ըռէնտէլէմիշ ըրիր նէ, ինչ գիտնամ...

— Հիմա չախան ձգէ, աս սուվառէն կըսեմ, կ'ուզեմ կոր նէ սալթտա պօշ տէյիլ մարդս, կը տեսնաս կոր քի աղջիկներդ կիւլ ֆիտանիի պէս եկան հասան, հօր մը, մօր մը պարաքն է քի ասոնք վախտովը տեղաւորէ, կլոխ հանէ, էյ հիմաճուկուան դանցան անանկ մուճիպ կ'ընէ կոր քի, ասանկ ուռուժիղտէն սուվառէներ տան, ճահիլ ճիւհիւլ ցատքեն, խաղան, է՛հ... սատանան գործ չունի, կ'ըլլայ քի կ'եփի...

— Կնիկ կ'եփի ամա, տակը առնէ նէ չեմ խառնուիր...

— Ամա՛ն, տուն ալ պիր տիւղ պատ կը քաշես խօրաթայիտ առջին, ինչ կ'ըսեմ կոր նէ ըլլայ կատարի պիտի, կ'իմանաս...

— Անէքի ասանկ սուֆուա՞յ է, սուվարէ է ինչ խառնախսի է նէ, իշտէ ատով մասրաֆները մոնալով ծախել՝ կլոխ հանել կուգես կոր նէ, անոր խօլալը կայ, հէմ ալ մասրաֆսըղ, իրեքը մէկ կ'առնես, բազարը կը տանիս, հարեջ կ'ըսես, հինգ վար, հինգ վեր, աչքդ կը կոցես կուտաս կ'երթայ...

— Ես քեզի չըսի՞ քի սընըրներդ ոտք են ելեր տէյի. իմ աղջիկներս տօլա՞պ պէկիրի են...

— Ինչ գիտնամ, ծախու կը հանես կոր նէ, մասրաֆսըղ եօլը ցուցուցինք...

— Հիմաճուկ պօշ լազլագիդ մէկդի տիր տէ, ինչ ըսեմ նէ ան գրէ քի օր առաջ առնես պերես:

— Կեցիր քան մըն ալ ըսեմ, անէքի աստար սիւրին հոս պիտի գան տէ ցատկըռտեն նէ... Է՛ն առաջ խալֆա մը բերեմ տէ՝ տունին թէմէլները քէֆշ ընել տամ, մարդոցը գլխուն պէլա մը չընանք սօղրա:

— Տահա՞ նէլէր... իրաւցունէ մանտայի առապա չպիտի կլտորցունենք եմ... եկող-

ները բիւթիւն թիւյի պէս կէնծ ու կանանչ աղջիկներ, տղաքներ . . . տահա պօշ բաներ կա՞յ նէ իճատ ըրէ . . .

— Բէք աղէ՛կ . . . սա տուրսի մուշամ պա՛ն, ներսի խալի՛ն . . .

— Ի՞նչ է եղեր քի, նոփ նոր է, ի՞նչ ունի . . .

— Իշտէ ատո՛ր համար կ'ըսեմ կոր եա՛. . . աս գինի կոխելու պէս, համար հաղար հեղ վրան կոխկռտն, ցատկռտն նէ, ի՞նչ կ'ըլլայ սօնը . . .

— Տահա՛ տղէ՛կ եա, խալի ըսածդ ի՞նչ տար կոխուի նէ ա՛նտար մախպուլ է, կ'ըսեն . . .

— Ան բան մը սովբեր ես ամա հէլլային խորխին համար է քի, ի՞նչտար կոխուի նէ բիշկին կ'ըլլայ, աս խալի է պապամ, հէմ ալ գիտնա եա, ինչ կիւճիկներով առինք, կէսմիշ ըրինք . . .

— Տո՛ւն, ախ տո՛ւն . . . կիտեմ ի՞նչ մաթահ ես նէ ամա, էրկինքներն ի վեր թըռ մալանմիշ ըլլաս նէ՛ պիտի ըլլայ կատարի . . .

— Բէք աղէկ ճանըմ, ուղածնիդ ըլլայ, ես ո՛վ եմ քի. հա՛խ ունիս, խալթ կերանք տէ բերանին բացինք, կնիկ չէ՛ք մի, սանկ նիմտէն խօսքերնիդ չըլլայ նէ քէօբիւրմիւշ կըլլաք. ի՞նչ կ'ուղէք նէ ան ըրէք, ես ձեզ մեղայ ըսելով, իր տիկնոջ կը յանձնէ երեկոյթին բոլոր պատրաստութիւնները, ու ինք կը քաշուի, յանձն առնելով տուփէլ միմիայն ծախքերը, առանց գիտնալու թէ ո՛րչափ գումարի պիտի նստի իրեն այդ աւուր պատշաճի երեկոյթը . . .

Տիկինը անդամ մը որ խօսք առաւ ամուսինէն, անմիջապէս այս բարեպատեհ լուրը կը հաղորդէ իր աղջիկներուն, որոնք մանկապարտէզի պէպէքներու պէս կըսկսին խայտալ . . .

— Ինձի նայեցէք աղջիկներ, հարերնիդ խանմիշ եղաւ, սիրտը չահեցայ, պիտի ըլլայ կատարի ամա, տուք ալ ֆիստաններն ուղ, սիւսերնուդ էվէլ էվէլօք մասրաֆի տուռ չպիտի բանաք . . .

— Աֆէրիմ մամաս, ըսել է քի լուսցունենք պիտի . . .

— Հապա օտքի օյին, տանս, ամենա կան բանը ըլլայ կատարի պիտի, հիմայ քալեցէք հօրերնուդ քովը տէ ինչ քի պէտք է նէ լիսթան չնենք ծառք տանք, մարդը հարի զօբի չիգայ . . .

Ու չորսը մէկ կրկին մարդուն վրայ կ'իյնան . . .

— Գրէ նայինք պէտքի բաները, մենք ըսենք, դուն գիրի առ . . .

— Տասը չիչէ խառ քօնեակ, երկու չիչէ անուշիու գօգուլու իշկի, երկու չիչէ ալ պաշխա թիւրլիւ բան մը, կէնէ խմելիքի ճընսէն . . .

— Սօլուխ առէք նայինք, խանութին քիբան նասըլ պիտի ընենք . . . ո՛ւր տեղ պիտի բանանք . . .

— Նասըլ խանութ . . .

— Ի՞նչ գիտնամ մէխանայ կը բանանք կոր նէ կէտիկլի՞ պիտի ըլլայ, չէնէ կէտիկպիղ . . .

— Ամա՛ն տուն ալ կէնէ մի՛ պաշլայէր, տահա կեցիր նայինք . . . աս ըսածնիս խմելիքներն են, ուտելիքին գալով . . .

— Տէ հրամանցէք նայինք մէխանային քովը լօգանթա մըն ալ պէ՛տք է եա՛ . . .

— Երկու օխա ֆուռ ղլօսէ . . .

— Ատոր հայերէնը ըսէ, հոռմերէն չիյտեմ . . .

— Իշտէ սա վրաները չէքէրլէնմիշ եղած մէյվա չէքէրի . . .

— Քա մեղք քի պան կիտեմ տէյի մատ մը կիռտան կը կախես կոր, աս չէքէրլէնմիշ եղած պայաթ բանը ինտո՛ր միսաֆիրի պիտի հանես . . .

— Քա ճանըմ չէքէրլէնմիշ եղած չէ՛. . . ճընսը անանկ է վրան պուղ կապածի պէս, տուն գրէ ճանըմ . . . մարդը կուտայ . . .

— Աղէ՛կ . . .

— Երկու օխա ալ, ի՞նչ էր քա ֆիլօ ա՛նոր անունը, սա կակող ճընսը . . .

— Փօնտան ֆուռէ հայրիկ . . . ֆօնտան . . .

— Ես ձեզի բան մը ըսեմ . . . չպիտի կրնամ պէճէրմիշ ըներ, քա ատ խառնախսրներուն հայերէնը ի՞նչ է . . .

— Կեցիր քի ըսեմ, հայրիկս, ֆօն տան ըսելը ակուայի մէջ ըսել է . . .

— Քա խեղքերնուդ եկաւ, հալանքը պիտի հանէք հէրիֆները, ելան ցաւէն մարիկ մարիկ գա՛ն նէ . . .

— Չէ ճանըմ անունը անանկ է, կլոր կլոր չէքէրներէն . . .

— Աղէ՛կ . . .

— Օխա ու կէս բըթի ֆուռ . . .

— Էյ աս օլսուն տունէն ուշտուրմիշ ը-
րէք, կիւնահ է բարաներուն . . . հա՛յտէ...

— Բա կէ՛օզիւմ մանարտիկ բաստանե-
րէն է ըսածս, ծուածեղ չէ քի տունէն ուշ-
տուրմիշ ընենք. . . տուն գրէ, քու խելքդ
չի համարի նէ պարէ մէջ մ'իյնար . . . :

— Շատ աղէկ. . . տահա՞, ածեցէք նա-
յինք . . . :

— Էյ տահա ինչ գիտնամ հէլպէթ մէկէ
Ֆիլան ալթըրն անխրատարը տուն կ'ուշտու-
րես, ըսելով երբ տանտիկինը իր հոգեհա-
տոր խուչիկներով ուրախութենէն կը խայ-
տար, ամուսինը խօսք առնելով՝

— Ինծի նայեցէք, Բուքու՛ւլ, սա պոօ-
յիս բալլիքը աւ տէ վերէն տունին հէօճէթը
վար բեր քի ասօրուընէ թէլլալի տամ . . .

— Ինչո՛ւ . . . տուներնիս կը ծախե՞նք
կոր քի . . . :

— Հապտ ի՛նչ գիտցար, տունը ծախենք
քի երէք խանութ բանանք, մէխանա, լօ-
գանթա, չէքէրլամէճիլի խանութ . . . :

— Տահա նէլէ՛ր . . .

— Ինծի կուգայ քի մինակ տունը վրայ
տալով ալ մէջէն չպիտի կրնամ ելլար, խա-
նութիս մալերն ալ մէզաթը պիտի տամ . . . :

— Ինծի նայէ քեզի ըսեմ, կ'ըսէ կինը
կաս կապուտ կտրած, աս երկու մատդ
խաղցունես պիտի քի աս պօյ պօյ մաթահ-
ները քշուին, ի՛նչ գիտցար, նստած տեղդ
ճանճ մը պիլէ տուգ ծառք չառնէր, իշտէ
ասանկ կերուխում Ֆիլան օթթան պիտի հա-
նես քի պէլքի, ի՛նչ գիտնամ բան մը՝ ըլ-
լայ . . . :

— Քեզի բան մը ըսե՛մ կնիկ, բիւթիւն
ասոնք քուկին ֆէսֆէսէդ են, ատ տալէթ-
լի միւսիւները որոնք են նէ, կուգան կ'ու-
տեն, կը խմին, քիչ մըն ալ աղջիկներդ
կ'առնեն հորը հորը կը ցատկեցնեն, էյ-
լէնմիշ կ'ըլլան, առտուն ալ բերանին կը
սրբեն դուրս կ'ելլան, դուն ալ ասդին էր-
թէսին օրը եազման կլոխդ կապէ, կէտին-
ները աւլէ, թօզերը առ, հէլլաք եղիւր. . . :

— Ես հիմաճուկուան դանցային կէօթէ
տալուանմիշ ըլլամ, հիմաճուկուան մարե-
րուն պէս պարտքս կատարեմ տէ ի՛նչ ըլլայ
ըլլայ, ետքէն աս աղջիկներուն պէտտու-
վայէն ազատիմ :

— Աղէկ եա հիմաճուկուան մաքերուն

պարտքը ի՛նչ է քի, ատ հասկնանք կնիկ . . .
ըսէ նայիմ . . . :

— Իշտէ ասանկ սուվառէ, կերուխում
տալ, մարդ տալէթ ընել, դործը կիրիշ
կիրիշ ընել, տաքցունել, մօտեցունել, կը-
լոխ հանել . . . :

— Բօռթուգալը տասնը հինգ հա՛տ պի-
տի ըլլայ . . . :

ԼԻԼԱ (*)

(*) Յաջորդ թիւով պիտի նկարագրենք
այս երեկոյթը՝ իր է՛ն բնական և զուտրթ
պատկերներով :

ԶՈՒԱՐԹ ԺԱՄԵՐ

Գիւղացի մը էշ մը ծախու առնելու
համար չուկայ կենէ. հոն, երբ էշը կը
գանէ, գրպանէն չուվան մը հանելով
զլուխէն մինչեւ ոտքը կը սկսի չափել
կենդանին : Իշուն տէրը երբ ասիկա կը
տեսնէ, կը հարցնէ .

— Ի՞նչ կընես բարեկամ, էշերը ա-
սանկ չեն քններ. փոխանակ հասակը
չափելու ակռաներուն նայէ :

— Ձէ՛ բարեկամ, կ'ըսէ գիւղացին,
ես ասիկա դաշտ տարած առնես, վրան
երեք հողի պիտի նստինք, ես, կինս ու
տղաս. ինչո՛ւս պէտք անոր ակռաները,
ինծի հասակը պէտք է :

Քանի մը բարեկամներ տեղ մը նստած
կը սկսին պատմել իրենց գլխուն եկած
փորձանքները :

— Ընկե՛ր, դուն բան մը չունի՞ս
պատմելու .

— Ճամբորդութեանս մէջ օր մը ա-
նանկ սոսկալի փոթորիկի մը բռնուե-
ցանք որ, անկարելի եղաւ օձիքնիս ա-
ղատել, չոգենաւ ընկղմեցաւ, ո՛չ մարդ-
մնաց, ո՛չ ալ ապրանք :

— Ուրեմն դո՛ւն ինտոր աղատեցար :

— Ես չոգենաւին մէջը չէի, կը պա-
տասխանէ :

ՏՈՒՆ

Աններկ, անորոշ, բեռառ ու դաժան
Տնակի մը ցած սեմին վրայ կուլայ
Արձանի պէս ջի'նջ չհնաղ մեկ տղայ,
Որուն դիմէն մի'տէս լացն է անբաժան :

Ներքի (*) մռայլ է, խորունկ ու բափուր .
Իրկուան արեւն հագիւ կը մասնէ
Ալեհեր հակաս մը անճարժ, ծիւնէ' .
—Ա'հ, միակ բանն, հող, սպիտակ, մաքուր...:

Հանին մեռեր է. ո'չ մեկն առնքեր,
Բայի տղեն որ կուլայ ջի'նջ կա'րի .
Ճակասն է անբիծ բեկոր տաճարի,
Ու լացն' անոր պարզ ցոլաքո՛ւրմ ստուեր...:

— Ինչ ունիս, պզտիկ հոգի մուք անկեան,
Ո'վ ստուերակուռ ձորի հէկ բողբոջ,
Ինչ ունիս որ, երբ գայ Մահն անագոյ,
Բու լացիդ մեջ դեռ պայծա՛ւ ես այնքա՛ն :

Ինչ ունիս որ լաս հպարտ, լա'ս կանգուն,
Ինչ ունիս, վա'յրի ծաղիկ լուսանել,
Մի՞նչ անբուժելի է մեր արտի սեւ .
—Ա'հ, Բնութիւնն ունիս, կո'յս, անխոց, բախուն:

ԵՊ. ԳՕԼԱՆՃԵԱՆ

(*) Տան ներքնամասը (l'intérieur) :

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Հաստատեալ 1805, Մերձան փողոց Թիւ 57

Տասնհինգ չաբաթէն Անգլիերէն կամ
Ֆրանսերէն սահուն կերպով խօսիլ կը փա-
փաքի՛ք . գնեցէ՛ք Մայքրէրշաֆթ սիսքսեր,
որ կը բաղկանայ 15 տետրէ և գինն է 30
շրշ :

Ա'լ մի ըսէք թէ՛ ինչպէս սորվինք գեր-
մաներէն, զի հրատարակուած է քերականը
համառօտ խօսակցութեամբ, գինն 2 շրշ :

ԱԶԲԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԼԻՔ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հագուիլ, շուիլ եւ աղամանդներով
զարդարուիլ, ինչպէս նաեւ տան կա-
րասիներ կոկել ամէն կերպով, առանց
հասկնիդ պարպելու

Ա. Յ. Լ.

ԱՊԱՌԻԿ

Մայր ես, աղջկանց օժիւր կը մտածես՝ դիմէ՛ . . .
Օրիորդ ես, շիր և աման հագուիլ կուզես՝ դիմէ՛ . . .
Երիտաւարդ ես շիր կը սիրես՝ դիմէ՛ . . .
Տարեց ես և ցուրտէն պատասպարուիլ կուզես՝ դիմէ՛ . . .
Տղաքներ ունիս, որոնց պիտոյք զանկ կը ճամնեցնեն՝ դիմէ՛
Ամուսնացու աղջիկ ունիս՝ ըրգակներու պէտք ունիս՝ դիմէ՛
Եկածը կապանդ է, նուէրներ գնել կը փափաքիս՝ դիմէ՛ . . .
Տարին քանի մը անգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ՛
Ձեռքդ պարսպ ճամբայ բալելը չես սիրեր՝ դիմէ՛
Կուզե՞ս տունդ կոկել ճաշակաւոր կարասիներով՝ դիմէ՛
Առանակարգ և տոկուն գուլպաներու պէտք ունիս՝ դիմէ՛
Կուզես շիր, ճաշակաւոր և լաւ տեսակ փողկապներ ու-
նենալ՝ վերջապէս կուզե՞ս՝ ոտից ցլուխ հագուիլ, շրուիլ,
պճնուիլ

դիմէ միմիայն

«ՀԷՐԱՅԻ» ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ, Բուլլուճուլար փողոց Թիւ 13
ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուստի,
ճերմակեղէնի, ֆանթէզիի, աղամանդի,
ժամացոյցներու, չղթաներու և ամէն տեսակ
կարասիներու ճոխ միջերդ մը :

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւ-
րին 20 կանխիկ և մնացեալ գումարին հա-
րիւրին 5ը չաբաթական վճարմամբ .

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին
5 զեղչ .

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն մի-
միայն աղամանդեայ գոհարեղէնները երբ
գործածուած բայց անվնաս մնացած ըլլան,
հարիւրին 10 զեղչով, իսկ ապառիկ ծախ-
ուած և անվնաս մնացած միմիայն աղաման-
դեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղ-
չով եւս կ'առնուին :

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ 2ԵՍՑ

14—30


«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»Ի ԹԵՐԹՕՆԸ

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԵՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲՅԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ



ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Բեւեռային սառոյցներուն մեջ միս մի-
նակ. — Սառած մարդու մը հոգեվարքի մը.
սածունները. — Սքալիում. — Օղերեւուրա-
բանական երեւոյթ մը երկինքի եւ երկրի
միջեւ. — Ուր Զինարէն կը հասկնան. — Սե-
ւամորթներ. — Ո՛վ եմ ուրեմն այս անչափե-
լի գլուխներով մարդիկը :

Ամէն կողմէ սառնակոյտը կը շաչէ, կը
շառաչէ, կը փսթուրի եւ կը կքի: Սառի խո-
շոր կտորները կապտորակ երեւոյթով, սուր
ցցունքներով եւ քմայական ձեւերով իրարու
կը բաղխին, կը սահին, կը ծփան ու կ'ըն-
կըղմին իրարու կցուելով, յետոյ դարձեալ
խորտակուելու համար:

Հորիզոնին վրայ տարտամ ցուր մը կը
լուսաւորէ գորշ կապոյտ երկինքը, ուր լու-
սաւորներ կը կայծկլտան: Այս անողոք ան-
սարանին տակ ստուռոյցի դժոյղքը կը տարա-
ծուի իր մթին եւ յուսահատեցուցիչ ամայու-
թիւնով: Այս անեղ քառսին մէջտեղը, —
զոր նկարագրելու համար եղած ոեւէ փորձ
անոր անուելիութենէն բան մը կորսնցնել
պիտի տար, — միս մինակ մարդ մը սառ-
նակոյտի մը վրայ հոգեւորք ինկած էր: Միս
մինակ, կը հասկնա՞ք:

Բեւեռային արշաւախումբի մը վերջին
ողջ մնացող այս մարդը իր նաւին փշուռիլը
իւր ընկերներուն՝ զրկանքներէ մոռնիլը կամ
անդունդներէն ընկղուզուիլը տեսնելէ ետք
ողջ մնացած էր, բայց ի՞նչ հրաշքով: Ալ
ո՛չ ապաստան կար, ո՛չ ուտեստ, ո՛չ կա-
րիւլի օգնութիւն եւ ո՛չ ալ յոյս: Աւելի եր-
կար մաքառելու անկարող՝ մահուան գալը
զգալով՝ անդգամ պառկած էր սառոյցին
վրայ, իր մուշտակներուն մէջ պլլուած վախ-
ճանին սպասելով: Անտանելի տառապանք-
ներու դժկամակութեան մէջ, որոնք կը

սաստկանային իրեն աչքովը տեսած շաղէտին
յիշատակովը, մարդը անվեհեր կերպով կը
տարրալուծէր իր վերջին տպաւորութիւննե-
րը եւ դառն ցանկութեան մը պէս կ'սկսէր
զգալ թէ անէութեան մէջ կը մոռնէ:

Այս պահուն, լոյսը որ աննշմարօքէն կ'ու-
կեղծէր համայն հորիզոնը եւ սառած կա-
տարները, ծիրանաւորեց յանկարծ երկինքը:
Լուսեղէն ճառագայթներ որոնց անբաղդա-
տելի ցուքին հազիւ կրնային դիմանալ իր
չլմոր աչքերը, ճաճանչաւորեցան ամէն կող-
մէ, մեղմաբար ծփալով մթնոլորտին ծան-
րաշուք խաւերուն շուրջ եւ այլերանգ բո-
ցավառելով սառնակոյտին հատուածները:

Մարդը երգիծանքով մը ժպտեցաւ եւ
մոմնջեց:

— Այս հիւսիսայեղ բարի գալստեան ող-
ջոյնն է եւ ես կը մեռնիմ աստուածացումի
վեհաշքութեամբ:

Յանկարծ մարդը սկսաւ պաղիլ, արագ
եւ ընդհանուր թմրութիւն մը ծայր տուաւ,
ցուրտին զգայնութիւնը ա՛լ աւելի շատցաւ
եւ մարդը փայտ կտրեցաւ, մինչ միտքը դեւ
կը դործէր: Սաստիկ ցուրտին մէջ մարմինը
անդգամ չէ, ինչպէս կը կարծուի: Սնդիկը
կարծրացնող եւ ալքով օշարակի թանձրու-
թեան բերող այս անեղ ցուրտին մէջ տա-
ռապանքի ծայրագունութիւն մը կայ: Ինչ-
պէս որ 70 աստիճան եռացած ջուրի մը մէջ
երբ մարդ մը ձգուի, անմիջապէս կը կազ-
մալուծուի իր մարմինը անուելի չարչարանք-
ներով, նոյն բանը կը պատահի նաեւ 70 աս-
տիճան զէրօյէն վար ցրտութեան մը մէջ,
ուր թմրած անդգամ չմնար մարմինը, այլ
կը սկսի կազմալուծուիլ տաքին չարչարանք-
ներովը: Երկու պարագային ալ կիզումը,
այրուած նոյնն է:

Օրհասականը մարած ձայնով մը կը հեծէր:

—Կը սառիմ, կ'այրիմ . . .

Իր մարմարի պէս ճերմակ, դէմքը ո եւ է արտայայտութիւն չունէր : Սիրտը դեռ կը բաբախէր բայց տակաւ աւելի կամաց կուրծքին տակ որ սակայն շնչառութեան չափաւոր շարժումներով չէր բարձրանար : Աչքերը խոշոր խոշոր բացած՝ եղիամապատ թարթիչներուն մէջտեղէն յառած են արշալոյսին ճաճանչեղ լոյսերուն և ցուրտէն մոտ մոտ կտրած, թեփոտած և ճաթրտած բերանը կիսաբաց մնացած է : Արիւնը կապարի պէս կը թանձրանար երակներուն մէջ, բայց ջիղերը մինչեւ վերջը կը պահէին տարտամ զգայնութիւն մը որ մարմինը կը կապէ մըտածման հետ : Մարդը, յաւիտենական սառույցներուն հսկայական խաւարին մէջ վերջնապէս ձուլուելու պահուն ինքնագիտակցութիւն մը ունեցաւ և կրցաւ նաեւ ըսել ինքնիրեն,

—Նղա՛ւ լմնցաւ ամէն բան . ալ տառապանքներս կը դադրին, անէութեան ծոցը կը մտնեմ վերջապէ՛ս . . .

Եւ մարմինը սառ դարձած, սառնակոյտին հրէշային խաւերուն մէջ հիւլէի մը վերածուած, աւելի սեղմ կերպով փակչեցաւ զինք կրող սառնակոյտին և հոն դրուագուեցաւ յաւիտենապէս :

է՛հ, արդեօք այս անհղ դամբարանը անբռնաբարելի՞ պիտի մնար : Մարդկային իմացականութեան անհատ ի՛նչ հրաշքով, աննշմար սրտփանքի մը մէջ շարժեցաւ այս մարմինը որ կերպով մը դաճացած էր քառսի մը մէջտեղը, որ զայն կամաց կամաց ծծած, իւրացուցած էր :

Տարիներ, դարեր թէ պարզապէս վայրկեաններ սահած էին այն վայրկեանէն ուր հիւսիսայդէն մագնիսացողը, սառուցեալ ծովին այդ մենակեացը զգաց թէ կորսուած է : Ամէն պարագայի մէջ մարդը կ'ապրէր դեռ :

Շփոթ բզզիւն մը զարկաւ իր ականջին . իր տակաւին խոլոռ աչքերը նշմարեցին տարտամ ձեւեր, որոնք կը շարժուէին անսովոր կենդանութեամբ մը . թեթեւ տաքութիւն մը մեղմակի գգուեց իր սառնացած մարմինը, իր բոլոր էութիւնը կարծես ան-

վերջ երանութեան մը մէջ ընկղմեցաւ : Երկար ատեն սակայն դնդերները պահեցին իրենց քարի կարծրութիւնը, երկար ատեն նաեւ սիրտը յամառեցաւ բաբախել պէտք եղած կերպով, աչքերը շարժելու, դէմքը կեանքի արտայայտութիւն մը առնելու :

Անմիջապէս պատկերները աւելի պայծառացան և ըմբռնողութիւնը աւելի ընդարձակուեցաւ : Օրհուտականը, հոգի, յարութիւն առած՝ սկսաւ շարժիլ և քանի մը բառ մըմնջել . յետոյ զարմանքի արտայայտութիւն մը ունեցաւ որ մինչեւ ապշութեան հասաւ : Գլուխէն մինչեւ ոտքը սեղմօրէն զրկուած երգիմնի մուշտակին եղբւրքէն կը տեսնուէր մարդ մը որ ծերութեան ծայր աստիճանին հասած էր, բայց կաշմուռն ծերութիւն մը, զառամութենէ և ցնդածութենէ զերծ : Մարդեր երկար, անխնամ, մօրուքը մինչեւ կուրծքը կ'իջնէր : Իր մարած, մշուշոտ ձայնին կը պատասխանէին արտակարգօրէն քաղցր երաժշտական ձայներ, որոնք անձանիթ լեզուով մը կարտասանուէին՝ կարծես անյարմար մարդկային հագագին : Այսուհանդերձ վանկերը յօգաւորուած էին, բայց անոնք օրհասականին համար ո եւ է նշանակութիւն չունէին և մեր մոլորակին վրայ խօսուած ո եւ է լեզուի չէին նմանէր :

Ծերունին կրկնակի շօշափումներու ազդեցութեան տակ, որոնք ելեկտրական տրեկար հոսանքներու փոխանցման պէս էին, վերջապէս շարժեցաւ և սկսաւ խօսիլ : Ըզգաց որ իր կորովը կամաց կամաց կը վերստանայ, և զարմանալի՛ բան, իրեն այնպէս երեւաց թէ զինք չըջապատող մարդերու խումբէ մը եկած այս հպումները իրեն նոր ուժեր կը ներարկէին :

Բայց, մարդ էին ասոնք :

Մտացնորանքի կամ զառանցանքի խաղալիք չէ՛ր արդեօք, իրաւունք չունէր այսպէս կասկածելու, երբ մահուան մթասարսուռ կալուածին սահմաններուն այնքան մօտեցած էր :

(Շարունակելի)

Արտօմատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն Մ. ՍԱՐԸԵԱՆ

Պապ. Ալի ճառեխի Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՐԵՐԱԵԼԻՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՑ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

4. Պոլիս, Սուրբան Համան, Թօփաշեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, տարանայ տա-
կունութեամբ և գիներու անմրցելի ա-
ժանութեամբը շահած է բոլոր իրեն գի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձեռնառն յատուկ ընտիր հա-
գուստներու, Կանանց թէքթիլներու և
տղայոց շիք և գիմացիուն փոքրիւներու
ճոխ մթերք մը պատրաստ առնի, որ
ջերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոնց, որոնք պէտք առնին ներկայ եղա-
նակին հադուստի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից .


Սախարկութիւն չկայ, թիւը 2 զրո է.
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին .

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ, Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

Վ.Ա.ՃԱՌԱՍՏՈՒՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱՒԵՏ ԹԷՅԵՐ

Կ. Պալիս, Պահճե՛րափու, Ճեղալ-Պեյ խան, քիւ. 10

Ա. Ն Տ Ե Լ Ի Պ

Վ. Ա. Ճ. Ա. Ռ. Ա. Տ. Ո. Ւ. Ն

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԵՏՈՅԻՑ

ՄԱՍՆԱԻՈՐԱԲԱՐ

Ֆոնոկրաֆի եւ Գրամոֆոն. Կրամֆոնի
եւ երկկողմ Բլագներու, Կեղրանա-
տեղի Պահճե Գաբու, Հաճի Պեքի
Էֆենտի կից, Եարտը խանի տակ
քիւ. 2: Մասնաճիւղ Պահճե Գաբու.
քիւ. 52:



Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համբա-
ւը բաղմամբիւ

յաճախորդներուն՝ ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ խոյն անդամ՝ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
դանուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
Կեղրանատեղին: